Հավելված
ՀՀ Հաշվեքննիչ պալատի
2024թ. հոկտեմբերի 31-ի թիվ 112-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024

1. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2
2. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ 3
3. ԱՄՓՈՓԱԳԻՐ 5
4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 6
5. ԿՈՄԻՏԵԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 7
6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ 8
7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ 15
8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 17

2. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը[1]	Հաշվեքննիչ պալատի 2024 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքը» հաստատելու մասին թիվ 79-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե:
Հաշվեքննության առարկան	Պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք, «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում և այլ իրավական ակտեր:

[1] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն Ընթացիկ եզրակացությունն օգտագործվում է ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ եզրակացությունը կազմելու համար:*

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի հունիսի 30-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2024 օգոստոսի 1-ից մինչև 2024 թվականի հոկտեմբերի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը[2]	Ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն է իրականացվել համապատասխան մեթոդաբանությունների և պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների ու տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի անդամ Հակոբ Միհրանյանը:

[2] *«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հաշվեքննիչ պալատի հաշվեքննությունների մեթոդաբանությունները հիմնված են Բարձրագույն հաշվեքննիչ մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) սկզբունքների, ստանդարտների ու ուղեցույցների վրա:*

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հաշվեքննության ենթակա ծրագրային միջոցառումներից «Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին» և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառումների մասով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից տեղեկատվություն չի ներկայացվել: «Հարկային և մաքսային ծառայություններ» միջոցառման մասով հայցված տեղեկատվության մի մասը տրամադրվել է առանց անալիտիկ բացվածքի: Արդյունքում սահմանափակվել է նշված միջոցառումների գծով կատարված ծախսերի օրինականության և հաշվետվությամբ արտացոլված տվյալ ցուցանիշների արժանահավատությունը գնահատելու հնարավորությունը:

Կոմիտեի կողմից չի ապահովվել հասանելիություն շահագործվող էլեկտրոնային կառավարման համակարգերին:

Հաշվեքննության ենթարկված «Դրոշմապիտակների ձեռքբերում», «ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար ներմուծման դեպքում պետական աջակցություն», «ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում» և «Հիպոթեքային վարկի վճարված տոկոսների գումարների վերադարձ» միջոցառումների գծով անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

Մանրամասները ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 4-ից 6-րդ բաժիններում:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ[3]

Հաշվեքննության ընթացքում «1102-12005 - Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին» և «1205-12009 - Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառումների շրջանակներում կատարված ընդամենը 107,820,288.3 հազ. դրամ դրամարկղային ծախսը հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ հայցված տեղեկատվությունը՝ անալիտիկ բացվածքով, Կոմիտեի կողմից չի ներկայացվել, որով սահմանափակվել է կատարված ծախսերի օրինականության և հաշվետվությամբ արտացոլված տվյալ ցուցանիշների արժանահավատությունը գնահատելու հնարավորությունը: Նշվածը կազմում է Կոմիտեի կողմից վերահսկվող 155,634,955.47 հազ. դրամ դրամարկղային ծախսի շուրջ 69.3%:

Հաշվեքննության ընթացքում հաշվեքննված հինգ ծրագրային միջոցառումների գծով կատարված 45,382,326.9 հազ. դրամ (շուրջ 29.2%) ծախսի մասով անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

Կոմիտեի կողմից չի տրամադրվել շահագործվող էլեկտրոնային կառավարման համակարգերին առցանց հասանելիություն:

Կոմիտեի կողմից հաշվեքննողներին չի հատկացվել նաև աշխատանքային տարածք:

Հարկային մուտքերի ձևավորման գործընթացներն իրականացվում են ինքնաշխատ համակարգերով՝ էլեկտրոնային ավտոմատացված համակարգերի միջոցով: Հաշվեքննիչ պալատի կողմից նշված էլեկտրոնային համակարգերը հաշվեքննության չեն ենթարկվել:

Կոմիտեի 2024 թվականի վեց ամիսների ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության արդյունքներով արձանագրված այլ փաստերը և հետհսկողական գործընթացը ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 6-րդ և 7-րդ բաժիններում:

---

[3] *Հաշվեքննությունը նպատակ է հետապնդել հաշվեքննության առարկային վերաբերելի տեղեկատվության ներկայացուցչական ընտրանքով (100%-ից փոքր) ձեռք բերել բավարար, համապատասխան հաշվեքննության ապացույցներ, որոնց կուտակմամբ ձևավորվելու է պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ եզրակացությունը՝ ներառյալ հաշվեքննության կարծիքը, որով պետք է արտահայտվի ողջամիտ (ոչ բացարձակ) հավաստիացում առ այն, թե պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, բոլոր էական առումներով, ներկայացնու՞մ է արդյոք ՀՀ պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ճշմարիտ ու իրական պատկերը:*

5. ԿՈՄԻՏԵԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ ԱՄԻՍՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Կոմիտեին որպես ծրագրերի կատարողի, 2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների պլանով նախատեսվել է 164,189,551.60 հազ. դրամի ծախս, որն ավելացել է 1,585,152.94 հազ. դրամով և ճշտված պլանը կազմել է 165,774,704.54 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 156,819,210.01 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 155,634,955.47 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 156,097,486.04 հազ. դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ դրամարկղային ծախսը կազմել է 93.88%, ըստ ծրագրերի ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

2024 թվականի պետական բյուջեի վեց ամիսների ցուցանիշներ - Աղյուսակ 1 (հազ.դրամ)

Ծրագիր		Հաշվետու ժամանակա հատվածի պլան	Հաշվետու ժամանակա հատվածի ճշտված պլան	Փաստ	Փաստացի ծախս
Ընդամենը		164,189,551.60	165,774,704.54	155,634,955.47	156,097,486.04
1015	Սոցիալական փաթեթների ապահովում	-	80,670.00	79,188.74	93,088.74
1023	Հարկային և մաքսային ծառայություններ	17,825,551.60	19,330,034.54	15,646,598.88	16,095,214.35
1102	Կենսաթոշակային ապահովություն	87,450,000.00	87,450,000.00	87,296,357.65	87,296,357.65
1205	Սոցիալական ապահովություն	25,650,000.00	25,650,000.00	20,523,930.65	20,523,930.65
1239	Հիպոթեքային վարկի վճարված տոկոսների գումարի վերադարձ	33,264,000.00	33,264,000.00	32,088,879.55	32,088,879.55

6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

1. 1102-12005 «ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿՑԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

«1102-12005 - Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին» միջոցառման շրջանակներում 2024 թվականի վեց ամիսների պլանով Կոմիտեին նախատեսվել է հատկացնել 87,450,000.00 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 87,296,357.65 հազ. դրամ՝ ճշտված պլանի 99.82%-ը:

Հայցվել է տեղեկատվություն Կոմիտեի կողմից 2024 թվականի վեց ամիսների ընթացքում «Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին» միջոցառման շրջանակներում կատարված ծախսը հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ՝ անալիտիկ բացվածքով, ինչը չի տրամադրվել, որով սահմանափակվել է հաշվետվությամբ արտացոլված տվյալ ցուցանիշի արժանահավատությունը գնահատելու հնարավորությունը:

Կոմիտեի արձագանքը

Կոմիտեն հաշվեքննողին միջոցառման շրջանակներում կատարված ծախսերի վերաբերյալ հիմնավորող փաստաթղթեր (անալիտիկ բացվածքով) ներկայացնել չէր կարող, քանի որ հարկ վճարողների կողմից այն տրամադրվում է էլեկտրոնային տարբերակով (հաշվետվություն):

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Կոմիտեի կողմից շահագործվող էլեկտրոնային համակարգերին որևէ եղանակով հասանելիությունը հնարավորություն կընձեռներ գնահատել հաշվետվական տվյալների արժանահավատությունը:

2. 1205-12009 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

«1205-12009 - Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառման շրջանակներում 2024 թվականի վեց ամիսների պլանով Կոմիտեին նախատեսվել է հատկացնել 25,650,000.00 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 20,523,930.65 հազ. դրամ՝ ճշտված պլանի 80.02%-ը:

Կոմիտեից հայցվել է տեղեկատվություն 2024 թվականի վեց ամիսների ընթացքում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառման շրջանակներում կատարված ծախսը հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ՝ անալիտիկ բացվածքով, ինչը չի տրամադրվել, որով սահմանափակվել է հաշվետվությամբ արտացոլված տվյալ ցուցանիշի արժանահավատությունը գնահատելու հնարավորությունը:

Կոմիտեի արձագանքը

Կոմիտեն վերոգրյալի հետ կապված համանման դիրքորոշում ներկայացրել է նախորդ կետում:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննիչ պալատի՝ նախորդ կետով ներկայացված մեկնաբանությունը վերաբերելի է նաև նշված կետին:

3. 1023-31003 «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՇԵՆՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

3.1. «ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/1» պայմանագիր

«1023-31003 - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավում» միջոցառման շրջանակներում 2024 թվականի վեց ամիսների պլանով Կոմիտեին նախատեսվել է հատկացնել 1,034,317.40 հազ. դրամ, իսկ ճշտված պլանը կազմել է 852,721.40 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 712,318.77 հազ. դրամ՝ ճշտված պլանի 83.53%-ը:

ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 5-ի N 621-Ա որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ ՀՀ Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի Գևորգ Չաուշի խճուղի թիվ 5 հասցեում գտնվող 19.1 հա ընդհանուր մակերեսով հողամասը և 23,616.9 ք/մ մակերեսով շենքերը և շինությունները (այսուհետ՝ գույք)՝ 07-053-0156-0013 կադաստրային ծածկագրով, 1,384,765,000 դրամ հաշվեկշռային արժեքով, հետ է վերցվել ՀՀ պաշտպանության նախարարությունից և ամրացվել Կոմիտեին: Կոմիտեին հանձնարարվել է նաև՝ իրականացնել նշված գույքի տեխնիկական վիճակի հետազննություն:

ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի N 282-Ն հրամանի հավելված 1-ով հաստատվել են բնակելի, հասարակական և

արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումները, մասնավորապես.

Կիրառում են հետազննության երկու ձևեր՝ դիտողական և դիտողագործիքային:

Դիտողական հետազննության ժամանակ ի հայտ են բերվում և նշվում են (անհրաժեշտության դեպքում լուսանկարվում են) երևացող թերությունները, դեֆորմացիաները, կոնստրուկցիաների տարրերի չափերի, ձևի ու դիրքի շեղումները, ճաքերի առկայությունն ու տեղաբաշխման բնույթը, ինչպես նաև մեխանիկական, կոռոզիոն, կենսաբանական, այրվածքային և այլ տիպի վնասվածքները:

Հատուկ ուշադրություն պետք է ցուցաբերել կրող կոնստրուկցիաների՝ հիմքերի, պատերի, հիմնակմախքի, կապերի, ենթաամբարձիչային հեծանների, ծածկերի, սանդուղքների հետազննությանը:

Միաժամանակ նշվում են գոյություն ունեցող վնասվածքների, դեֆորմացիաների և թերությունների հնարավոր պատճառները:

Անհրաժեշտության դեպքում բացվում են կոնստրուկցիաները, ինչպես նաև ժամանակավոր ամրակապվում և ցանկապատվում են վթարային վիճակում գտնվող կոնստրուկցիաները և վտանգավոր տեղամասերը:

ՀՀ պաշտպանության նախարարի և Կոմիտեի նախագահի կողմից հաստատված (25.06.2022թ. և 06.07.2022թ.) գույքի հանձնման-ընդունման ակտի համաձայն՝ հանձնման-ընդունման ժամանակ համատեղ իրականացվել է 23,616.9 ք/մ մակերեսով շենքերի և շինությունների ակնադիտական ուսումնասիրություն:

Ի պատասխան 2024 թվականի հուլիսի 19-ի ՊԵԿ թիվ 1/18-2/45214-2024 գրության՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից տեղեկացվել է, որ վերը նշված գույքի քանդման ընթացքում գոյացած մետաղական կոնստրուկցիաների շուկայական արժեքի գնահատման աշխատանքներն իրականացնելու նպատակով «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ին տրվել է հանձնարարական:

Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/1» պայմանագրի շրջանակներում ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից նախանշած հասցե (ք.Երևան, Էրեբունի, Նուբարաշենի 2) են տեղափոխվել շենքերի քանդման ընթացքում գոյացած մետաղական կոնստրուկցիաները՝ ընդհանուր 103,040 կգ քաշով: Կոմիտեի և ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի միջև հանձնման-ընդունման գործընթացն ավարտված չէ՝ հանձնման-ընդունման ակտ կազմված չէ:

Կոմիտեի արձագանքը

Վերոգրյալ պայմանագրի շրջանակներում Կոմիտեի 103,040 կգ քաշով մետաղական կոնստրուկցիաները տեղափոխվել են ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից նախանշված հասցե և ՀՀ կառավարության 15.04.2021թ. N 587-Ն որոշմամբ սահմանված կարգով լիազոր մարմինը իրականացնելու է դրանց գնահատման և օտարման գործընթացները:

Հաշվեքննիչ պալատի մեկնաբանությունը

Կոմիտեի կողմից ներկայացված մեկնաբանությունն ընդունվել է ի գիտություն: Գործընթացը կուսումնասիրվի հաջորդիվ իրականացվելիք հաշվեքննության շրջանակներում:

4. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2024 թվականի վեց ամիսների համար սահմանվել էր 1,304,206,284.1 հազ. դրամի հարկերի և տուրքերի ստացում: Դրա դիմաց ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 1,187,638,387.4 հազ. դրամ հարկային եկամուտներ և տուրքեր՝ ապահովելով 91.06% կատարողական:

Հարկային մուտքերի ձևավորման գործընթացներն իրականացվում են ինքնաշխատ համակարգերով: Տնտեսվարողների կողմից հաշվետվությունները և մաքսային հայտարարագրերը ներկայացվում են էլեկտրոնային ավտոմատացված համակարգերի միջոցով:

Հաշվեքննիչ պալատի կողմից նշված էլեկտրոնային համակարգերը հաշվեքննության չեն ենթարկվել:

Կոմիտեի արձագանքը

Կոմիտեի կողմից վերահսկվող հարկային եկամուտների վերաբերյալ ներկայացված տեղեկատվության կապակցությամբ նկատառումներ չունենք:

5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽՏԱՆԱՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

Հաշվեքննության ընթացքում «1102-12005 - Կուտակային հատկացումներ մասնակցի կենսաթոշակային հաշվին» և «1205-12009 - Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ

առողջությանը պատճառված վնասների հատուցում» միջոցառումների շրջանակներում կատարված ընդամենը 107,820,288.3 հազ. դրամ դրամարկղային ծախսը հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ հայցված տեղեկատվությունը՝ անալիտիկ բացվածքով, Կոմիտեի կողմից չի ներկայացվել, որով սահմանափակվել է կատարված ծախսերի օրինականության և հաշվետվությամբ արտացոլված տվյալ ցուցանիշների արժանահավատությունը գնահատելու հնարավորությունը: Նշվածը կազմում է Կոմիտեի կողմից վերահսկվող 155,634,955.47 հազ. դրամ դրամարկղային ծախսի շուրջ 69.3%: «1023-11001 - Հարկային և մաքսային ծառայություններ» միջոցառման մասով հայցված տեղեկատվության մի մասը տրամադրվել է առանց անալիտիկ բացվածքի[4]:

Հաշվեքննիչ պալատի կողմից հայցվել է Կոմիտեում շահագործվող էլեկտրոնային կառավարման համակարգերին (ՊԵԿ տեղեկատվական բազա, ավտոմատացված վերլուծական և ինքնաշխատ ծանուցման համակարգ, հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգ, «Հարկատու 3», «Ստուգումների կազմակերպման էլեկտրոնային» ավտոմատացված տեղեկատվական համակարգ, Mulberry և այլն) առցանց հասանելիություն, որը չի տրամադրվել: Կոմիտեի կողմից չի ապահովվել նաև «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջները, մասնավորապես. հաշվեքննողներին չի հատկացվել աշխատանքային տարածք:

Կոմիտեի արձագանքը

1023 «Հարկային և մաքսային ծառայություններ» ծրագրի 11001 «Հարկային և մաքսային ծառայություններ» միջոցառման շրջանակներում մասնակի տեղեկատվության (առանց բացվածքի) տրամադրման վերաբերյալ հայտնում ենք, որ այն ընդունելի չէ և Կոմիտեն ամբողջական տեղեկատվությունը տրամադրել է

---

[4] *1023-11001 միջոցառման մասով տրամադրված տեղեկատվության մի մասը՝ Կոմիտեի մի շարք հասարակային միավորների վերաբերյալ (պատճենահանող, բաժնի պետ-սպասարկման սրահի ղեկավար, տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգող, կշեռքավար, ռենտգեն զննող սարքավորման օպերատոր, նախագահ, նախագահի 1-ին տեղակալ, նախագահի տեղակալ, նախագահի խորհրդական, նախագահի 1-ին տեղակալի օգնական, գլխավոր քարտուղար, գլխավոր քարտուղարի տեղակալ, պարետային ծառայության հերթափոխի պետ, կապի մասնագետ, բարեվարքության հարցերով կազմակերպիչ, համակարգչային ցանցերի առաջատար ադմինիստրատոր, տեղեկատվական շտեմարանների ադմինիստրատոր, բաժնի պետ-գլխավոր հաշվապահ, քարտուղարության պետ, քարտուղարության պետի տեղակալ, ամբարձիչի վարորդ, ճարտարագետ-շինարար, գանձապահ) տրամադրվել է առանց անալիտիկ բացվածքի, այսինքն առանց անհատականացնող տվյալների: Առանց անհատականացնող տվյալների հնարավոր չէ կիրառել հաշվեքննության համապատասխան ընթացակարգեր, ինչի հետևանքով սահմանափակվում է կատարված ծախսի օրինականության և հաշվետվությամբ արտացոլված տվյալ ցուցանիշների արժանահավատությունը գնահատելու հնարավորությունը: Վերջիններիս գծով կատարված ծախսը կազմել է 136,699.4 հազ. դրամ:*

հաշվեքննողին, առանց անհատականացնող տվյալների և այն կարող է տրամադրվել միայն անձնական տվյալների սուբյեկտ հանդիսացող անձանց համաձայնության առկայության պարագայում:

Հաշվեքննողին Կոմիտեի կողմից շահագործվող էլեկտրոնային կառավարման համակարգերին (ՊԵԿ տեղեկատվական բազա, ավտոմատացված վերլուծական և ինքնաշխատ ծանուց-ման համակարգ, հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգ, «Հարկատու-3», «Ստուգումների կազմակերպման էլեկտրոնային» ավտոմատացված տեղեկատվական համակարգ, Mulberry և այլն) առցանց հասանելիության չտրամադրումը պայմանավորված է իրավունքների սահմանափակմամբ: Մասնավորապես, 2023 թվականի օգոստոսի 17-ից Կոմիտեն անցում է կատարել տեղեկատվական անվտանգության ISO/IEC 27001:2023 միջազգային ստանդարտի, որի A.13.2 կետով (Տեղեկատվության փոխանցում, Information transfer) խիստ պահանջներ է սահմանվում տեղեկատվության առցանց տրամադրման հարցում:

Միաժամանակ հայտնում ենք, որ Կոմիտեն պատրաստակամ է եղել վարչական շենքում հաշվեքննողին տրամադրել աշխատանքային տարածք, համակարգիչներ և թույլտվություններ տեղեկատվական համակարգերի ու շտեմարանների հետ աշխատելու համար, ինչը կատարվել է նախորդ հաշվեքննությունների ժամանակ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Կոմիտեի արձագանքը վերահաստատում է հայցված տեղեկատվության, ինչպես նաև աշխատանքային տարածք չտրամադրելու վերաբերյալ հաշվեքննությամբ արձանագրված փաստերը:

1023 «Հարկային և մաքսային ծառայություններ» ծրագրի 11001 «Հարկային և մաքսային ծառայություններ» միջոցառման շրջանակներում օգտագործված միջոցների օրինականությունը գնահատելու նպատակով Հաշվեքննիչ պալատը կիրառում է հաշվեքննության ընթացակարգեր, ներառյալ «վերահաշվարկ» ընթացակարգը, որը նախատեսում է ելակետային տվյալների հիման վրա հաշվարկի ճշտության գնահատում[5]: Ընթացակարգը հնարավոր է կիրառել աշխատանքի վարձատրության հաշվարկների համար հիմք հանդիսացող՝ անձնական տվյալներ պարունակող մի շարք փաստաթղթերի և տեղեկատվության առկայության դեպքում.

- աշխատանքի ընդունելու, աշխատանքից ազատելու, տեղափոխման և արձակուրդների հրամաններ,
- պարգևատրումներ և դրամական օգնություններ տրամադրելու հրամաններ,
- ժամանակավոր անաշխատունակության թերթիկներ,

[5] *Հիմք՝ «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մաս:*

- աշխատաժամանակի թղթային կամ էլեկտրոնային տարբերակով հաշվառման տվյալներ,
- աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հաշվարկման այլ փաստաթղթեր:

Ելնելով վերոգրյալից, տեղեկատվության տրամադրումն առանց անհատականացնող տվյալների՝ անհնար է դարձնում նշված միջոցառման շրջանակներում կատարված ծախսի օրինականության և հաշվետվությամբ արտացոլված տվյալ ցուցանիշների արժանահավատությունը գնահատելու հնարավորությունը:

Տեղեկատվական համակարգերին հասանելիության մասով հարկ է նշել, որ Հաշվեքննիչ պալատի ՀՊԵ/01/551-2024 գրությամբ հայցվել է հասանելիություն Կոմիտեի տեղեկատվական համակարգերին՝ տեղեկատվական անվտանգության անհրաժեշտ ընթացակարգերի պահպանմամբ:

Չի ապահովվել էլեկտրոնային համակարգերում առկա տեղեկատվության հասանելիությունը, ինչպես նաև չի ապահովվել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ հաշվեքննողներին աշխատանքային տարածք հատկացնելու պարտականությունը:

7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Կոմիտեում 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությամբ ներկայացվել է առաջարկություն, որը չի ընդունվել Կոմիտեի կողմից, մասնավորապես. հաշվի առնելով 2023 թվականի պետական բյուջեի կատարման նկատմամբ հաշվեքննությամբ արձանագրված խնդիրների լուծված չլինելու հանգամանքը, առաջարկվել է 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննությամբ ներկայացված առաջարկությունների[6] իրագործման նպատակով հաստատել միջոցառումների ծրագիր՝ յուրաքանչյուր միջոցառման համար սահմանելով պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը: Կոմիտեն առանց բավարար, համապատասխան հիմնավորումների չի ընդունել նշված առաջարկություններն, այն դեպքում երբ օրենսդրությամբ սահմանված պահանջներն ապահովելու համար դրանք ենթակա են կատարման: Մանրամասն նկարագրությունը ներկայացված է Հաշվեքննիչ պալատի կայքում՝ «Փաստաթղթեր» բաժնի «Ընթացիկ եզրակացություններ» ենթաբաժնում:

Կոմիտեի արձագանքը

Կոմիտեն ևս մեկ անգամ հաշվեքննողին հայտնում է, որ 2024 թվականի վեց *ամիսների հաշվեքննության արձանագրության մեջ 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ հետհսկողական գործընթացի ներառումը անընդունելի է և չհիմնավորված, ինչով պայմանավորված առաջարկում ենք վերջինս հանել արձանագրությունից:*

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունք-ների վերաբերյալ ընթացիկ եզրակացությամբ արձանագրված անհամապատասխանությունների և առաջարկությունների գծով, Կոմիտեն իր դիրքորոշումը ներկայացրել է 2023 թվականի տարեկան հաշվեքննության ընթացքում և այլ առաջարկություն չունի, առավել ևս արձանագրված խնդիրների լուծման նպատակով սահմանել կատարման ժամանակացույց:

Բացի այդ, ՀՀ հաշվեքննիչ պալատի 2024 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքը հաստատելու մասին» N 48-Ա և 2024 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում 2024 թվականի պետական բյուջեի վեց

---

[6] *Հրապարակված է Հաշվեքննիչ պալատի կայքում՝ «Փաստաթղթեր» բաժնի «Ընթացիկ եզրակացություններ» ենթաբաժնում:*

ամիսների կատարման հաշվեքննության առաջադրանքը հաստատելու մասին» N 79-Ա որոշումներով 2023 թվականի տարեկան հաշվեքննության արդյունքների հետիսկողության գծով որևէ առաջադրանք նախատեսված չէ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

«Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հաշվեքննության գործընթացը բաղկացած է հաշվեքննության իրականացման (այդ թվում՝ պլանավորման, կատարման և հաշվետվության) ու հետիսկողության[7] փուլերից: Հետևաբար հետիսկողության փուլը հանդիսանում է յուրաքանչյուր հաշվեքննության պարտադիր բաղադրիչ, ինչի վերաբերյալ հաշվեքննության առաջադրանքներում առանձին նշում չի կատարվում:

Կոմիտեի 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ներկայացված առարկությունները և դրանց կապակցությամբ Հաշվեքննիչ պալատի մեկնաբանություններն արտացոլված են Կոմիտեում 2024 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացության «Հավելվածներ» բաժնում:

Հաշվեքննիչ պալատի արձանագրումները, առանց բացառության՝ հիմնավորվում են հաշվեքննության ապացույցներով և ըստ այդմ՝ առաջարկությունները նպատակ են հետապնդում Կոմիտեի փաստացի գործելակերպը համապատասխանացնել իրավական ակտերի պահանջներին: Մինչդեռ, դրանց նկատմամբ Կոմիտեի արձագանքը հիմնավորվում է գործելակերպով, այլ ոչ թե՝ օրենդրության պահանջներով: Ըստ այդմ, ներկայացված առաջարկությունները ենթակա են կատարման:

[7] *Հետիսկողության գործընթացը նկարագված է «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 29-րդ հոդվածով:*

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ելնելով ընթացիկ հաշվեքննության արդյունքներից և նկատի ունենալով 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման նկատմամբ հաշվեքննությամբ արձանագրված խնդիրների լուծված չլինելու հանգամանքը ՀՀ պետական եկամուտների կոմիտեին առաջարկվում է.

- 2023 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննությամբ ներկայացված առաջարկությունների իրագործման նպատակով հաստատել միջոցառումների ծրագիր՝ յուրաքանչյուր միջոցառման համար սահմանելով պատասխանատու ստորաբաժանում(ներ)ը և միջոցառման կատարման ժամանակացույցը:

Հակոբ Միհրանյան
Հաշվեքննիչ պալատի անդամ

Digitally signed by
MIHRANYAN HAKOB 1108660142
Date: 2024-11-08 16:21:48

31 Հոկտեմբերի 2024 թվական

Հաշվեքննիչ պալատ
Բաղրամյան փող. 19, ք. Երևան,
Հայաստանի Հանրապետություն